

«ԳՐԻՆ ՖԱՐՄԵՐ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2020թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ  
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԵՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անկախ առտիստորական եզրակացություն	3
Ֆինանսական հաշվետվություններ	
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

## ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Գրին Ֆարմեր» ՍՊԸ-ի մասնակիցներին

### Կարծիք

Մեր առողջության ենք ներարկել «Գրին Ֆարմեր» ՍՊԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2020թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքի մասին, և էփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր ենթական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրույցամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՍՍ):

### Կարծիքի հիմք

Մեր առողջություն իրականացրել ենք առողջությի միջազգային ստանդարտներին (ԱՍՍ-ներ) համապատասխան։ Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացնելով նկարագրված է այս եղբակացության «Առողջությի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների առողջության համար» բաժնում։ Մեր անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էքիվայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էքիվայի կանոնագրի (ՀԷՍՍՆ կանոնագիրը) և պահպանել ենք էքիվայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍՆ կանոնների։ Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան առողջության ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար։

### Անընդհատության հիմունքին վերաբերող ենթան անորոշություն

Ձեր ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 13-ի վրա, որտեղ նշվում է, որ Ընկերության գույն վեասը կազմել է 1,503,057 հազար դրամ (որից 1,103,173 հազար դրամը արտադրույթի փոխարժեքային տարբերություններից) 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում, և այդ ամսաթվի դրույցամբ կուտակված վեասը կազմել է 2,387,255 հազար դրամ։ Ինչպես նշված է Ծանոթագրություն 13-ում, այս դեպքերը կամ իրավիճակները, ի թիվս նշված այլ հարցերի, ցույց են տալիս, որ առկա է ենթան անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ։ Մեր կարծիքը չի ձևավոխիլ այս հարցի կապակցությամբ։

### Այլ հանգամանք

2019թ. դեկտեմբերի 31-ի դրույցամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար ներկայացված համեմատելի տեղեկատվության առողջության չի իրականացվել։

Նեկավարության և կառավարման օղակներում գունդող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության դեկավարությունը պատասխանառու է ՓՄԿ-ների ՖՀՍՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար։

որև ըստ դեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով եական խեղաքյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվորյունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվորյունները պատրաստելու պատասխանատու է Ընկերության անդաման գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անդամանառությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անդամանառության հիմունքը կիրառելու համար, եթե դեկավարությունը չունի Ընկերությունը կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չփարվելու որևէ իրատեսական այլնութանք:

Կառավարման օղակներում գունդող անձններ պատասխանատու են ֆինանսական հաշվետվորականության գործընթացի վերահսկման համար:

#### **Առողջական պատասխանառություններ ֆինանսական հաշվետվորյունների առողջականության**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվորյունները բոլոր եական առումներով զերծ են եական խեղաքյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող առողջական եղանակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխափորում, որ ԱՍՍ-ներին համապատասխան իրականացված առողջական միջուկ կհայտնաբերի եական խեղաքյուրումը, եթե այն առկա է Խեղաքյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են եական, եթե խեղամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազմեն ֆինանսական հաշվետվորյունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվորյունների հիման վրա կայացնող տևտեսական որոշումների վրա:


ԱՍՍ-ների համաձայն իրականացրած առողջական ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրում՝


- հասկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվորյունների եական խեղաքյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք առողջական ընթացակարգեր՝ այդ ոիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում առողջական ապացուցներ, որոնք բավարար և համապատասխան ենք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած եական խեղաքյուրման շհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով եական խեղաքյուրման շհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանգանք համաձայնություն, գեղձարարություն, միտումնավոր բացրողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շարաշակում:
- ձեռք ենք բերում առողջական վերաբերող ներքին հսկողության մասին պատուերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան առողջական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված բաղադրականության տեղին լինելը, ինչպես նաև դեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խեղամտությունը.
- եղրահանգում ենք դեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անդամանառության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված առողջական ապացուցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է եական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անդաման գործելու կարողության վրա: Եթե մենք եղրահանգում ենք, որ առկա է եական

անորոշություն, ապա մեզանից պահանջվում է առողջտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը։ Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաբիլը ձեռք բերված առողջտորական ապացույցների վրա։ Մական, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերության դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը։

- զետահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բավանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացմումը։

Նեկավարությանը, ի բիւս այլ հարցերի, հաղորդակցում ենք առողջտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև առողջտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին։

  
Թաքով Առաքելյան  
Գլխավոր տնօրին

  
Առաք Արքյան  
Առաջադրանքի դեկանար



24 հունիսի, 2021թ.,  
ք.Երևան, Պ.Սևակի 8

«Գրին Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն  
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն  
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ԴՐԱՄ

	Ծանոթ.	31/12/20	31/12/19 (առողջ մրցականացման)
--	--------	----------	-------------------------------------

**Ակտիվ**

Հիմնական միջոցներ	6	14,854,432	14,550,813
Ոչ նյութական ակտիվներ	7	2,997	14,200
Ֆին. վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ	8	538,396	137,303
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար		56,509	83,409
Հետաձգված հարկային ակտիվ	23	-	2,228
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>15,452,334</b>	<b>14,787,953</b>
<b>Պաշարներ</b>	9	916,474	768,907
Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար	10	162,425	136,822
Առևտրական դերիտորական պարտքեր	11	119,857	102,800
Այլ ընթացիկ հարկային ակտիվներ	17	68,790	19,034
Դրամական միջոցներ	12	83,262	24,850
Ֆինանսական ակտիվներ		-	350
Այլ ընթացիկ ակտիվներ		95,696	106,679
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>1,446,504</b>	<b>1,159,442</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>16,898,838</b>	<b>15,947,395</b>

**Սեփական կապիտալ և պարտավորություններ**

Կանոնադրական կապիտալ	13	77,110	53,110
Կուտակված վճառ	13	(2,387,255)	(884,198)
Էմիսիոն նկամուտ	13	1,176,000	-
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>(1,134,145)</b>	<b>(831,088)</b>

Վարկեր	14	7,717,885	7,296,374
Փոխառություններ	15	8,495,277	8,909,269
Ֆին. վարձակալության գծով պարտավորություններ	8	392,397	121,644
Ակտիվներին վերաբերող շնորհներ		863	791
Հետաձգված հարկային պարտավորություններ	23	3,199	-
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>16,609,621</b>	<b>16,328,078</b>

Վարկեր	14	662,035	85,000
Ֆին. վարձակալության գծով պարտավորություններ	8	75,416	-
Առևտրական և այլ կրնչատորական պարտքեր	16	591,465	230,265
Կանխավճար ծառայությունների համար		5,675	3,773
Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ	17	64,977	116,725
Աշխատավարձի և այլ կարճ հատուց-ի գծով պարտ-քյուն	18	20,531	12,290
Եկամուտներին վերաբերող շնորհներ		3,263	2,352
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>1,423,362</b>	<b>450,405</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>16,898,838</b>	<b>15,947,395</b>

Տնօրին

Գլխավոր հաշվապահ



Առքերտ Կոնդիսյան

Ֆիզիկական Օրբելյան

**«Գրին Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն  
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

000 դրամ	Շահոր.	31/12/20	31/12/19 (առջին չիրականացված)
Վաճառքից հասույթ	19	3,612,621	3,389,285
Վաճառքի ինքնարժեք	19	(3,265,820)	(2,984,107)
<b>Համարուառն շահույթ</b>		<b>346,801</b>	<b>405,178</b>
Գյուղատնտեսական արտադրակի բերքահավաքի պահին «Իրական արժեք հանաձ վաճառքի հետ կապված ծախտումներ»-ով ճանաչումից օգոստ	20	3,763,343	3,530,689
Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր	20	(2,868,630)	(2,691,288)
<b>Գյուղատնտեսական գործունեության արդյունք</b>		<b>894,713</b>	<b>839,401</b>
Իրացման ծախսեր		(664,263)	(571,320)
Կարշական ծախսեր		(161,932)	(139,145)
Ներխորական պարտքերի արժեզրկումից կորուստեր	11	(7,874)	-
Այլ եկամուտներ (ծախսեր)	21	(209,365)	(165,821)
<b>Գործառնական շահույթ</b>		<b>198,080</b>	<b>368,293</b>
Ֆինանսական ծախսեր	22	(592,538)	(674,009)
Փոխարժեքային տարրերությունից վեաս		(1,103,172)	(19,987)
<b>Շահույթ (վեաս) միևն հարկումը</b>		<b>(1,497,630)</b>	<b>(325,703)</b>
Ծահութահարկի գծով ծախս (եկամուտ)	23	(5,427)	69
<b>Զուտ շահույթ (վեաս)</b>		<b>(1,503,057)</b>	<b>(325,634)</b>

Տեսքներ

Գլխավոր հաշվապահ

Ուժերա Կոծիսյան

Տեղական Օրբելյան



Դրամ	Ծանոթագր.	Կանոնա- դրական կապիտալ	Կուտակված վեաս	Էմիսիոն եկամուս	Ըստաներ
Մեջքական առ 31 դեկտեմբերի 2018թ. (առևլող չիրականացված)	13	53,110	(558,564)	-	(505,454)
Զուտ շահույթ (վեաս)		-	(325,634)	-	(325,634)
Մեջքական առ 31 դեկտեմբերի 2019թ. (առևլող չիրականացված)		53,110	(884,198)		(831,088)
Զուտ շահույթ (վեաս)		-	(1,503,057)	-	(1,503,057)
Ավելացում/պակասեցում		24,000	-	1,176,000	1,200,000
Մեջքական առ 31 դեկտեմբերի 2020թ.		77,110	(2,387,255)	1,176,000	(1,134,145)

Sbopkli

Գլխավոր հաշվապահ

Օպերատ Կոծինյան

Տրամադրության օպերատ



000 դրամ	Ծանոթ.	2020	2019
		(Առևլիս Հիգափանացված)	
<b>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</b>			
արտադրանքի, ապրանքների, ծառայությունների վաճառքից		3,625,338	3,470,009
այլ ներհոսքեր		126,975	1,182,000
նյութերի, ապրանքների, ծառայությունների ձեռք բերումից		(2,469,210)	(1,688,684)
աշխատավայրերին և երանց անունից կատարված վճարումից		(479,929)	(460,184)
այլ հարկերի, պարտադիր վճարների վճարումից		(57,019)	(148,161)
այլ արտահոսքեր		(275)	(338)
<b>Գործառնական գործունեությունից դրամական գուտ հոսքեր</b>		<b>745,880</b>	<b>2,354,642</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</b>			
հիմնական միջոցների վաճառքից		7,500	-
տոկոսների ստացումից		32	-
հիմնական միջոցների ձեռքբերումից	6	(786,882)	(1,906,407)
<b>Ներդրումային գործունեությունից դրամական գուտ հոսքեր</b>		<b>(779,350)</b>	<b>(1,906,407)</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր</b>			
վարկերից և փոխառությունների ստացումից	14,15	1,306,935	4,304,930
վարկերի և փոխառությունների մարումից	14,15	(2,364,538)	(4,727,678)
բաժնեմասերի բողարկումից (լրացուցիչ ավանդների ներդրումից)	13	1,200,000	-
վարձակալության պարտավորությունների մարումից	8	(49,647)	(19,355)
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական գուտ հոսքեր</b>		<b>92,750</b>	<b>(442,103)</b>
Ըստամենք դրամական միջոցների գուտ հոսքեր		<b>59,280</b>	<b>6,132</b>
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ		(868)	294
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի		24,850	18,424
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի		83,262	24,850

Տիգրան Կոծիսյան

Տիգրան Կոծիսյան

Գլխավոր հաշվապահ

Տիգրան Օռելյան



## 1. Ընդհանուր տեղեկություններ

### 1.1. Նկարագիր և գործունեություն

«Գրին Ֆարմ» ՍՊԸ (այսուհետ՝ «Ընկերություն») հիմնադրվել է 2016թ:

Ընկերության հիմնական գործունեությունը՝ զուրատեսական արտադրանքի արտադրություն և վաճառք:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Մատանյան 33/4: Ընկերության ջերմոցային տնտեսությունը գտնվում է Կոտոյի մարզի ք. Հրազդան, Զրառատ 999 հասցեում, իսկ ինտենսիվ այգիները գտնվում են Արարատի մարզի Երասխ գյուղում և Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղում: Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղում է գտնվում նաև Ընկերության սահմանադրությունը:

Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2020թ. 302 անձ է, իսկ 2019թ.՝ 327:

### 1.2. Կորպորատիվ կառուցվածք

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերթունական լուծման իրավունք: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարությունը և տնօրինը՝ Ռոբերտ Կոծինյանը:

Մասնակիցներ	Բաժնեմասերի չափ(%)	Անդամական արժեք (ՀՀ դրամ)
Ընդհանուր, այլ թվում	100	77,110,000
Արևելյան Հարուրյունյան	40	30,844,000
Արման Աբրահամյան	30	23,133,000
Հենրիկ Հարուրյունյան	15	11,566,500
Ռոբերտ Հարուրյունյան	15	11,566,500

## 2. ՓՄԿ-ների ՖՀՍՍ-ին համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՍՍ) համապատասխան:

## 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է:

Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

## 4. Հաշվապահական հաշվառման բաղարականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

### 4.1. Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբանական արժեքի հիմունքով: Սովորաբար սկզբանական արժեքը հիմնված է ակտիվի դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

### 4.2. Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվությունները ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ.

բ) ֆինանսական արդյունքի մասին մեկ հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Ըսկերությունը ներկայացնում է շահույթում կամ վճառում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառությունը վրա հիմնված դասակարգումը:

զ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար.

դ) դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով ուղղակի մերույթը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես ֆինանսավորման, ստացված տոկոսներն ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:

ե) ծանոթազրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման բաղադրականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվություններից:

Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համարելի տեղեկատվությունը: Եթե Ընկերությունը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացնումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համարելի գումարները, բացի այս դեպքերից, եթե վերադասակարգումն անիրազործելի է:

#### 4.3. Հիմնական միջոցներ

##### Հափումը ճանաչուման պահին

Հիմնական միջոցի միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, պետք է չափվի իր սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ անհապաղ վճարման վեհ համարժեքն է: Եթե վճարումը վճարման նորմալ պայմաններով նախատեսված ժամկետից հետաձգվում է, անհապաղ վճարման վեհ համարժեքն և ըստհանուր վճարումների տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային ծախս:

Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ զեման զիեզ, ներկրման տուրբերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցեներու և դեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատաերային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս առևտրային գելցերը և արտոնությունները հանդում են:

##### Հափումը ճանաչումից հետո

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

##### Բերրատու բույսեր

Բերրատու բույսը (օրինակ՝ խնձորի, կեռասի, ծիրանի տեսկներ) հիմնական միջոց է Բերրատու բույսերի միավորը յուրաքանչյուր այզին է, որը նույն տեսակի տեսկներով տարբերակված տարածք է: Յուրաքանչյուր այզին հիմնական բնութագրերն են՝ վայրը, մակերեսը, տեսկների տեսակը, տեսկների քանակը:

Բերրատու բույսերը հաշվառվում են նույն կերպ. ինչ սեփական ուժերով կառուցված հիմնական միջոցի միավորները՝ նախքան դրանք կգուման այլավայի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է դեկավարության նախանշած նպատակով օգտագործելու համար: Բերրատու բույսերի դեպքում «կառուցվում» բառի օգտագործումը մեկնաբանվում է որպես գործունեության իրականացում, որն անհրաժեշտ է բերրատու բույսերի ամեցման համար՝ նախքան դրանք կգուման այլավայի վայրում և վիճակում (անհմանված տարիքի հասունությունը և բերրատվության նորմատիվային չափ), որն անհրաժեշտ է դեկավարության նախանշած նպատակով օգտագործելու համար: Միևնույն դեկավարության նախանշած նպատակով օգտագործելու համար: Միևնույն դեկավարության նախանշած նպատակին հասնելը այզիները հաշվառվում են որպես անավարտ հիմնական միջոցներ: Այդ ընթացքում

բերքատու բույսերից ստացված զյուղատեսական արտադրանքի իրական արժեքի չափով նվազեցվում է անակարտ հիմնական միջոցների վրա կապիտալացվող ծախսումները:

#### Մաշվածություն

Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի ևս առնվազ Ընկերության կրոմից ակտիվի ենթադրվող օգտագործելությունը, ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը, տեխնիկական հեացածությունը, հիմնական միջոցի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումները:

Ընկերությունը հիմնական միջոցների խմբերի նկատմամբ կիրառում է հետևյալ օգտակար ծառայությունները.

Շենքեր	40 տարի
Կառուցվածքներ	30 տարի
Փոխանցող հարմարանքներ	30 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5-15 տարի
Տրանսպորտային միջոցներ	8-10 տարի
Բերքատու բույսեր	15 տարի
Արտադրատեսական գույք, գործիքներ	5-10 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	1-10 տարի
Այլ հիմնական միջոցներ	8 տարի

Հողամասը ունի անսափիմանափակ օգտակար ծառայություն, հետևաբար որա համար մաշվածություն չի հաշվարկվում:

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, եթե այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ եթե այն գնուվում է այնպիսի վայրում և վիճակում, որի անհրաժեշտ է դեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ որպես վաճառքի համար պահպան դասակարգվելու (կամ որպես վաճառքի համար պահպան դասակարգված օտարման խմբում ներառվելու) և ակտիվի ապահանաչելու ամսաթվերից ամենավաղություն:

#### Հետազա ժայիռություն

Հիմնական միջոցի միավորին վերաբերող հետազա ծախսումներն ավելացվում են որա հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են). Եթե այդ ծախսումները բավարարում են ձանաչնա չափանիշները: Սասեավորապես, հիմնական միջոցի միավորի վրա նոր մասի ավելացման, կամ հիմնական միջոցի միավորի մի մասի պարբերաբար փոխարինման ծախսումները ավելացվում է հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում է): Հիմնական միջոցների փոխարինվող մասերը ենթակա են ապահանաչելու: Բերքատու բույսերի դեպքում միավորի (այզի) վրա նոր մասի ավելացում կամ փոխարինում է համարվում տևելի ավելացումը կամ փոխարինումը:

Ամենօրյա սպասարկման ծախսումները չեն ավելացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (չեն կապիտալացվում):

#### Արդարացում

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ապահանաչվի, եթե՝

ա) այն օտարվում է, կամ

բ) ապազա ոչ մի տևտեսական օգուտ չի ակնկալվում որա օգտագործումից կամ օտարումից:

#### **4.4. Ոչ նյութական ակտիվներ**

##### Հետազոտության միուն

Հետազոտությունից (կամ ներքին նախագծի հետազոտության փուլից) առաջացող ոչ նյութական ակտիվները չեն ձանաչնա: Հետազոտության (կամ ներքին նախագծի հետազոտության փուլի) ծախսումները ձանաչնա են որպես ծախս՝ որում տեղի ունենալու պահին:

Ներստեղծված գուղվիլը չպետք է ճանաչվի որպես ակտիվ:

Ներստեղծված մակենիշները, երապարակումների անունները, հաճախորդների ցուցակները և ըստ եռյան և մանաւուիպ միավորները չպետք է ճանաչվեն որպես ոչ կյուրական ակտիվներ:

#### Աշակերտական փուլ

Մշակումից (կամ ծրագրի մշակման փուլից) առաջացող ոչ կյուրական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, եթե Ընկերությունը կարող է ցուցադրել ստորև բերվածն ամբողջությամբ:

ա) ոչ կյուրական ակտիվը այնպիսի ավարտուն վիճակի հասցնելու տեխնիկական իրազործելությունը, որ այն մատչելի լինի օգտագործման կամ վաճառքի համար.

բ) ոչ կյուրական ակտիվը ավարտին հասցնելու և այն օգտագործելու կամ վաճառելու իր մտադրությունը,

գ) ոչ կյուրական ակտիվը օգտագործելու կամ վաճառելու իր կարողությունը,

դ) այն, թե ինչպես է ոչ կյուրական ակտիվի առաջացնելու հնարավոր ապագա տևականությունը: Ի թիվս այլոց, Ընկերությունը պետք է ցուցադրի ոչ կյուրական ակտիվի միջոցով ստեղծվող արդյունքի կամ հենց այդ ոչ կյուրական ակտիվի համար շուկայի առկայությունը, կամ, եթե ակտիվը օգտագործելու է Ընկերության ներսում, ապա ոչ կյուրական ակտիվի օգտակարությունը.

ե) մշակում ավարտին հասցնելու և ոչ կյուրական ակտիվի օգտագործելու կամ վաճառելու համար անհրաժեշտ համապատասխան տեխնիկական ֆինանսական և այլ միջոցների առկայությունը,

զ) ոչ կյուրական ակտիվին մշակման ընթացքում վերագրելի ծախսումները արժանահավատորեն չափելու իր կարողությունը:

#### Հափումը ճանաչման պահին

Ոչ կյուրական ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով:

Ոչ կյուրական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է՝

ա) դրա գիման գինը՝ ներառյալ ներկրության տուրքերն ու գիման շինուատուցվող հարկերը՝ առնտրային գեղշերը և արուռնությունները հանելոց հետո.

բ) ակտիվին իր նպատակային օգտագործման վիճակին բերելու հետ կապված ցանկացած ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

#### Ճեղագագում

Սկզբնական ճանաչումից հետո ոչ կյուրական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները)՝ հանած ցանկացած կուտակված ամորտիզացիա և ցանկացած կուտակված արժեզրկումից կորուստ:

#### Ամորտիզացիա

Ամորտիզացիան պետք է հաշվարկվի այն պահից, եթե ակտիվը մատչելի է օգտագործման համար՝ հետեւյալ օգտակար ծառայությունից ելնելով:

- |                        |                                |
|------------------------|--------------------------------|
| - Համակարգչային ծրագիր | 10 տարի                        |
| - Լիցենզիաներ          | Լիցենզիայի գործողության ժամկետ |

Ոչ կյուրական ակտիվի մեացորդային արժեքը գնահատվում է գրո. իսկ ամորտիզացիայի հաշվարկման կիրառվող մեթոդը է գծային մեթոդը:

#### 4.5. Ակտիվների արժեզրկում

Սույն պարագագի դրույթները վերաբերում են հիմնական միջոցներին, ոչ կյուրական ակտիվներին:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի բրույրամբ գնահատում է՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այլպիսի հայտանիշ, ապա Ընկերությունը գնահատում է ակտիվի փոխատուցվող գումարը:

Եթե առկա է որևէ հայրածից, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել, ապա փոխհատուցվող գումարը գնահատվում է առանձին ակտիվի համար: Եթե հետապոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Ընկերությունը որոշում է այն դրամատեղ միավորի փոխհատուցվող գումարը. որին պատկանում է տվյալ ակտիվը (ակտիվի դրամատեղ միավոր):

#### Արժեզրկումից կորուստ

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վեասում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված գումարով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեզրումը ճշգրտվում է ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը երա մնացորդային օգոստակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով:

#### Արժեզրկումից կորուստի հակադարձում

Արժեզրկումից կորուստի հակադարձմանը վերագրելի ակտիվի ավելացած հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան ամորտիզացիայի կամ մաշվածության), եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Ակտիվի, բացառությամբ գումարի, գծով արժեզրկումից կորուստի հակադարձումը ճանաչվում է շահույթում կամ վեասում, բացառությամբ երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով: «Վերագնահատված ակտիվի արժեզրկումից կորուստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ: Արժեզրկումից կորուստի հակադարձումը ճանաչելուց հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեզրումը ճշգրտվում է ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը երա մնացորդային օգոստակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով:

#### **4.6. Կենսաբանական ակտիվներ**

##### Հայփում

Սպառվող կենսաբանական ակտիվը սկզբնական ճանաչման պահին և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չափվում է իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, բացառությամբ, երբ իրական արժեքը հեշտությամբ որոշելի չէ՝ առանց անհարկի ծախսումների և ցանքերի:

##### Օգուտները և կորուստները

Օգուտները կամ կորուստները, որոնք առաջանում են կենսաբանական ակտիվի՝ իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, սկզբնական ճանաչման պահին, ինչպես նաև կենսաբանական ակտիվի՝ իրական արժեքի փոփոխությունները՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, ներառվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վեասում, որում դրանք առաջացել են:

##### Հրական արժեքը արժանահավասարելել չափելու անհարաժեշտություն

Կանխավարկած կա, որ կենսաբանական ակտիվի իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափել: Այսուամենայնիվ, նշված կանխավարկածը կարող է հերքել միայն կենսաբանական ակտիվի սկզբնական ճանաչման պահին, որի համար շուկայում սահմանված գները կամ արժեքները մատչելի չեն, և որի համար իրական արժեքի այլընտրանքային չափումները համարվում են բացահայտ անարժանահատված: Նման դեպքում այդ կենսաբանական ակտիվը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված

մաշվածությունը և արժեգրկումից կուտակված կորուստները: Ներ որ կենսաբանական ակտիվի իրական արժեքը արժանահավատորեն չափելի է դառնում. Ընկերությունը չափում է այդ ակտիվը իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները:

#### 4.7. Գյուղատնտեսական արտադրանք

Գյուղատնտեսական արտադրանքը Ընկերության կենսաբանական ակտիվներից ստացված արտադրանքն է բերքահավաքի պահին: Մասնավորապես բերքատու բույսերից ստացված պտուղները (օրինակ՝ խնձոր կեռաս, ծիրանի), միամյա բույսերից ստացված պտուղները (օրինակ՝ լոլիկ, վարունգ):

#### Համար

